քեր հետևանքները, — բայց չէ կարելի չը նկատել, որ նոյն իսկ իւր լայնատարածած համեստ նպատակին չէ հասնում հեղինակը։ Եւ իրաւի «Օրիորդ Նադիկ Կիլիկեանի» բովանդակութիւնը ինքն ըստ ինքեան ոչինչ նորութիւն չէ ներկայացնում։ Գեղարուեստական և հոգեբանական ճշդութիւն բացակայ է նկարագրութիւնների մէջ, թէև ամբողջ վէպիկի նիւթը իրական կեանքից է վերցրած։ Արդարև, տեղ տեղ երևում են հումորի թոյլ նշոյլներ, բայց այդ նշոյլները շատ հեռու են «անմեղ հաճոյք» պատճառելու ձգտումից։ Աւելացրէք այդ ամենի վերայ և այն, որ հեղինակը բաւականաչափ չէ մշակել իւր լեզուն, ի չարն է գործ դնում բանաստեղծի ազատութիւնը (licentia poëtica), իսկ երբեմն ուղղակի մեղանչում է տաղաչափութեան օրէնքների դէմ։ Այսպէս, օրինակ, նա գրում է 'ւ փոխ. և, շողոքորթում 'ին՝ փոխ. շողոքորթում էին, թ' երբ փոխ. թէ երբ, խինդով փոխ. խնդութեամբ, անաս փոխ. անձայն և այն։ Պատահում են և այս տեսակ կուրեօղներ.

«Գզգված հերքը ուսերին բա
թափել 'ին խաւը, անփոյթ
ու անկապ» (55)

Կամ «Բայց մինչև այժմ տիկին Անանուց
Ոչինչ չեմ պատմել ես կարդացողին
Թէ ինչ համու հոտ տեսնում էր մարդուց...

Բացի վէպիկից այս գրքոյկի մէջ՝ որպէս «լաւելուած» տպած են և մի քանի «բանաստեղծութիւններ», որոնց մէջ ամեն բան կը գտնէք, բայց բանաստեղծութիւն՝ ոչ։

Խորհուրդ կը տայինք պ. Տէր-Ղևոնդեանին փորձել իւր ոյժերը գրականութեան ուրիշ ճիւղերում. ոտանաւոր գրելու համար մի առանձին ձիրք չէ պահանջւում, սակայն ամեն ոտանաւոր բանաստեղծութիւն չէ։

ՎԱՆԿ

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

1) Навасартянцъ Багратъ,—Диссертація на степень доктора медицины. „Къ вопросу о вліяніи Эссентукской № 17-й воды на усвоеніе и обмѣнъ азотистыхъ веществъ". С.-Петербургъ, типогр. газ. „Новости", 1890 года.

2) Калантаръ Александръ.—„Скотоводство въ связи съ окружающими его условіями". Докладъ читанный 9-го Января 1890 г. въ I. отдѣленіи Имп. Вольн Экон. Общ. С.-Петербургъ, 1890 года, типогр. Демакова. Цѣна 40 коп.

3) Калантаръ Александръ,—„Докладъ Калантара о V отдѣлѣ молочн. хозяйства Кавказск. выставки 1889 г., читанный въ засѣд. Петерб. собранія сельскихъ хозяйевъ. С.-Петербургъ, 1890 г. типографія Товарищества „Обществ. Польза".

4) ՐԱՖՖԻ.—«ՀԱՑ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ»։ Թիֆլիս, տպարան Տ. Նալբանդեանցի։ Գինն է 1 ր. 50 կոպէկ։